



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Impression book : Smithson 1891

18948

891.99

t - 31

542-3

-31

120

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

ՃԳՆԱՌՈՐ ԵՂՈ

(ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԿԵՐՆՔԻՑ)

1891

ՄՈՍԿՈՒԱ
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՈՒԴՅԱՆԻՆԻ.

(27)

891.99

Կ-311

Վ. ՓԵՓԵՑԵՄԵՑ.

Այ

ՃԳՆԱԼԻՐ ԵՂՈ

(ԹԻՒՐԲԵՆՑԱՑԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)



12003

00.82610 ՄԱՍԿՈՒԱ
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՑԻՉ ԲԱՐԽՈՒԻԴԱՐԵԱՆԻ

1891

38280 մի

120

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 2 Июля 1891 г.



21058

21358-60

Типографія М. Бархударянъ, Газетный пер. д. Ліанозова, Москва.

ան անու այսով վեցակն է անալ ու Ան անու անու^ւ
... անընդհանուր տպագութ ու այսու ձևու անու անու
սպանութ ազգօն վառելու ազգակ սպան ու ան ան
աշազ քաշ քարդ ։ Ֆրանկոս մանուկանու տեսն
ուսումնակ չեմ առ իս ան մասուն ու ան ան
աւանձուն ու ան անու քան զայ ու ան ան
ուղամաքան ։ Տայ ան ան ու ան ան ան
ան ան ան ան ան ան ան ան ան ան ան
ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան
ՃԳՆԱԻՈՐ ԵՂՅՕ:
գողի-պատ քաջանուն Հայուն արք Շահու
պատ ու շնուր ու քայլու Ան ան ան ան ան ան ան
ու ան ան պատ պատ պատ պատ պատ պատ պատ
պատ պատ պատ պատ պատ պատ պատ պատ պատ

— Զէ՛, այսպէս չի լինիւ ։ Վարենք մենք, հնձէ՛
Տասան բէզը. ժողվենք մենք, չալշարուենք մենք,
«Կօռի-բէզիրի» դիմանանք մենք, Տասան բէզը հան-
զիսա՞ մէջքը բարձին տայ ու մեր քրաինքը ուտէ,
մեր կանանց քաշէ ու ենէ մեր ամեն բանը ծաղրէ...
— Մեղ ասէ թէ՛ «Քրիստոս էլ ինձ նման աւագակ
էր՝ խաչեցին...»

— Գոռայ թէ՛ հայը գեաւուր է, գեաւուրն ով է,
որ սիրուն կին ունենայ, տաւար ու եղ ունենայ...
— Հանդիստ ապրի...)

— Գեաւուրը ստեղծուած է, որ միւսելմանին ծա-
ռայէ...

Սյս խօսքերը տեղի էին ունենում սրանից մի քա-
նի տարի առաջ՝ Մուշի Չուխուրայ կողմի գիւ-
ղերից մէկում գտնուող՝ մի մեծ տան սենեակում, ուր
հաւաքուած նստել էին 30—40 ծերեր և լսում էին
երիտասարդների այդ կատաղի խօսքերը:

— Զօ՛, զոռաց մի ուրիշ երիտասարդ, — օրը ցորե-
կով գայ ձեռքիցս կովս խլէ ու ինձ էլ ապտակ

խփէ... ա՛խ, թէ որ հայրս չ'աղաչէր լռելու, տես ևս
ինչպէս նրա մեծ փրդուշը ականջը կրթողնէի...

— Զօ, ձօ, գոչեց ծանրութեամբ ծերունիներից
մէկը՝ երիտասարդին դառնալով, — լեզուդ քեղ քաշէ.
դժու ով, այդպէս մեծ խօսքերն ով. գու էլ նահա-
տակ լինելդ ես մէջ տեղ բերում, էլ չես մտածում,
որ եթէ մի շարժում գործես քեղ պաշտպանելու,
առաջ քեղ և ապա ամբողջ ընտանիքդ կտոր-կտոր
կ'անէ անօրէնը. զիտե՞ս թէ որտեղ ես, ի՞նչ ես կորց-
րել ինչ ես որոնում... ուր է իրաւունք, ուր է ար-
դարութիւն. բոլորը հաջե-թայիրի¹⁾ փեշերի տակ են
թագնուել. քանի քանի հրաշքով՝ մարդու նմանող
միթէսէրիփներ²⁾ փորձեցին իրաւունքը և օրէնքը
այդ փեշերից աղատել բայց հաջե-թայիրը հեռագիր
տուաւ իւր զիտցած տեղը, մաշայով Մշյ երկից
թոցրեց այդ «երեխաններին» և օրէնքը այս անգամ
բարձ շինելով՝ դիսի տակը դրաւ. ու այս ու այն բէ-
դի ձեռքը մի մի սուր տուաւ. Ձէ՛նդ կտրիր ու մեզ
փորձուածներիս լսիր. հալա, քանի կարող ենք, քար-
ծար կ'անենք, որ մեր կրօնը ու ունեցածը պահենք,
երբ չըկարողացանք... է՛հ, հալքաթ հային էլ Աս-
տուած կայ...

— Լաւ է ասում Աստոմը, զիտեց մի ուրիշ ծե-
րունի, — երթանը այդ անիծածի մօտ, նորէն աղա-
չներ, ուրքերն ընկնենք, իր մարդարէն իրեն յիշեց-
նենք, բարքի մեղ ողորմայ:

¹⁾ Մուշը մէջ մի յալտնի շէլս-աւաղակապետ, որ շատ աղ-
դեցիկ մարդ է. յայտնի Մուսա-բէզի աներն է, մինչև այժմ կեն-
դանի և երկիրը տակն ու վրալ է անում:

²⁾ Գաւառապետ:

— Տէր, ողորմեա, գոչեց մի ուրիշ ծերունի, — գեռ-
երէկ էր, որ անիծուածի ոտքն էլ լիզելու իջանք.
Էլի՞ գնանք:

— Իզուր է, մէջ մտաւ չորրորդ ծերունին, — Հա-
սան բէզը զզուել է մեր աղաշանքներից. նաև երէկ
ինձ ասում էր. «գեաւուրնե՛ր, ձեր աղաշանքները
զզուեցրին ինձ, ձեր զիւդն էլ ձանձրացրեց ինձ, բե-
րէք 500 ոսկի տուէք, ես ելնեմ երթամ զիւ-
դիցը...»

— Հա՞ գոչեցին բոլորը ուրախացած, — փառք Աս-
տուծոյ, մեռնեմ զօրութեանդ, Աստուած:

— Ոտացդ հողն եմ, Մշու Սուլթան Ա. Կարապետ:

— Քզի զուրբան, Առաքելոց վանք:

Եւ ընդհանուր զոհաբանական աղօթքները սենեա-
կը լցրին այնպէս, որ Աստուած, եթէ խուլ էլ լի-
նէր, կրլսէր այդ ծերմ աղօթքը...

Երիտասարդների վայրկենական կատաղութիւնը
իջաւ. ամեն մարդ այժմ սկսեց իւր հողի և արտի
մասին մտածել:

Խոկ գձարուելիք փողը:

— Հէ՛յ մարդիկ, բացականչեց յանկարծ մի ծերու-
նի, — ամենքս էլ ուրախացանք՝ լսելով, որ Հասան
բէզը վերջապէս հաճում է այլ ևս մեր կափերը ըբ-
իւել, մեր ցորենի դէզերը չ'այրել մեր զեղեցինե-
րը՝ չ'առեանգել. բայց այդ բոլորը անելու համար
ախր նա բարեհածում է 500 ոսկի վարձ էլ ուզել...
Մեր զիւզը սաղ ծախես դրա կէսր չի արժիլ. մեղ-
նից որ մէկը ունի մէկ ոսկի պատրաստ փող. 500

ոսկին որտեղից պիտի գտնենք, որ Հասան բէզի ա-
ւաղակութիւնը գնենք, տանք նրան, ինդրենք, որ բա-

րեհածի այլ ևս աւազակութիւններ չ'անել և հեռանալ զիւղից:

Ուրախութեան մէջ ոչ ոք չէր մտածել զբա վրայ և այժմ, երբ ծերունին յիշեցրեց, ամենքի զուարթ գէմքերը իսկոյն տիսուրի փոխուեցին:

Պարզ էր այս անգամ, որ աւազակի ձեռքից ազատուել անկարելի էր. հինգ հարիւր ոսկի և մի չնչին, աղքատ գիղեց: Մի քազաք էլ չի կարող տալ թիւքահայաստանում այդ գումարը իւր փաշային, բան է եթէ յանկարծ նա կամենայ այդ փրկանքով աղտտել իւր ձեռքից քաղաքը:

Երկար խօսեցին խառն՝ ի խուռն՝ նախ մեղմ ապա գոռզուալով, յետոյ կոռւելով. մի քանի խումբ մինչև անգամ բոռնցքներով սկսեցին խօսել... վերջապէս երիտասարդները կամաց կամաց սկսեցին սենեակից գուրս գնալ՝ թողնելով այնտեղ միայն ծերունիներին:

Սրանք նախ փոքր ինչ՝ լոռութեամբ ու մորուքները շփելով՝ մտածեցին, յետոյ սկսեցին միմեանց հետ ցած ձայնով խօսակցել.

—Եղայրներ, վերջ՝ ի վերջոյ ասաց մէկը, —ուրիշ ձար չըկայ. կամ պէտք է լոել ու զիմնաւ և կամ այդ գումարը ձարել, տալ: Շունը թէւ մէկ հատ է, բայց Աստուած մի արասցէ, որ մեր ջահիներից մէկը մտածի յանկարծ նրա վրայ քար քցել. մէկ էլ տեսար իսկոյն՝ մի փոքրիկ պատճառի ուզատող՝ միւս չները զիւղը կըթափուն ու քար քարի վրայ չեն թողնիլ մեր զիւղի թողը կըբարձրացնեն:

—Այդ այդպէս է, զիւղեց երկրորդը, —բայց զիմնաւ անկարելի է. պիտի մի կերպով փողը մէջներս

հաւաքենք և տանք անօրէնին ու աղատուենք նրա ձեռքից, մինչև որ տեսնենք՝ մի ուրիշ տւազակ էլ երբ կըգայ կընստի մեր զիւին:

—Ես էլ այդպէս եմ տառւմ, մէջ մտաւ քէհեան՝ վճռական կերպով, —հարիւր տուն ենք. ամեն մէկիս 5 ոսկի կընկնի. Ճարենք ու տանք:

Յետոյ երկար խօսեցին. վերջապէս վճռեցին. 5-ական ոսկի ձարել ու աւազակին տալ:

Փոքր ինչ իրենց զրութեան մասին խօսեցին, փոքր ինչ Աստուածուն գանգատեցին, փոքր ինչ ախ ու վախ քաշեցին, թրջեցին իրենց մորուքները, յետոյ ոտքի ելան, բարեփ փախարէն դիւրութեամբ միմեանց նայեցին, վլուխները թափահարեցին և՝ վշտից հարբածների պէս՝ հեռացան:

Գիւղի մի հեռաւոր անկիւնում, մի խումբ ծառերի մօտ, կար մի անշուք իրծիթ, ուր բնակվում էր ծերունի վրմնօն իւր ընտանիքի մի քանի անգամների հետ:

Ինքը շատ ծեր էր, ուստի և՝ եկեղեցի գնալուց ու արտում իւր եղօ որդու աշխատանքի վրայ հսկելուց բայց՝ ուրիշ զործ չէր կարողանում կատարել: Իւր կինն էլ այդպէս. միմիան եկեղեցի էր զնում և տուն գառնալով՝ հսկում էր իւր հարսի տանու գործերին և կամ թէ փոքրիկ թողը զիրկը առած՝ անգամար խաղացնում էր, նրա առջե մոռանալով իւր

հասակը, երեխայի պէս ծիծաղում՝ խաղեր էր սարքում և զուարձացնում էր թռոնիկին:

Բաւական հանգիստ ապրում էին, մի լուծ եղ ունեին, որով իրենց հողեց կարողանում էին օրական պարէնը ձեռք քցել մի կով ունէին, և ուրիշ ոչինչ. էլ ի՞նչ պէտք է սակաւապէտ գիւղացու համար:

Վլթնոն երջանիկ էր, որովհետեւ պոհ էր իւր վեճակից, և ուրիշի ունեցածին չէր նախանձում: բարեպաշտ էր մոլեռանդի չափ, այդպէս էլ նա կը թթել էր իւր որդուն, մի այդպէս էլ հարս էր գտել նրա համար, և տան մէջ նարեկի «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» վերնագիր կրող դլուխները անդադար անդիր կերպով կրկնվում էին: Նարականները՝ նրանց երգերն էին, վալք սրբոյր—ձմեռնային երկար երեկոների զբաղմունքը. երբէք եկեղեցուց յետ չէին ընկնում ժամերգութեան ժամանակ. քահանան նրանց տնիցը անպակաս էր. օրհնում էր հացը, երբ սկսում էին թխել. կարասը՝ եթէ մէջը մուկ էր ընկել և թասը՝ եթէ կատուն ջուր էր խմել մէջը:

Եղօն, երբ փոքր էր, մի քիչ ծառայել էր քաղաքի մի աղայի տանը. ուր և սովորել էր կարդու. այնտեղեց իւր հետ նա գիւղն էր բերել վարը սրբոց, ժամագիրը, աւետարան և սաղմոս: Եթէ նրա արտը վարող լինէր և ինքը վարժուած, նրան անպատճառ գիւղի վարժապետ կ'անէին. բայց Եղօն շատ համեստ էր, զիտէր՝ որ ինքը վարժապետ չէր կարող լինէլ: Զէր հպարտանում իսկ որ կարգալգրել գիւեր:

Այնչափ բարեպաշտ էր, այն աստիճան կատաղի կերպով հալածում էր խմողներին, խաղացողներին, ան-

բարցյականներին, այնչափ պարսաւում էր կիւրակի օրը գործողներին, պաս ըրպահողներին, որ արժանապէս նրա անունը դրել էին ձգնաւոր Եղօ:

Եւ իսկապէս որ Եղօն ձգնաւոր էր: Նա մի կաթիլ գինի կամ օղի բերանը չէր դնիլ. զզվում էր Ծխախոտից, աչքերը խոնարհեցնում էր, երբ անցնում էր օտար կնոջ առջեկից. իմախչում էր, երբ մի տեղ կիւրակի օրերը գիւղացիք նատած՝ նոր մօղա ընկած խաղի թղթերով «ականքիլ¹⁾» էին խաղում: Կասկածանքով էր նայում այն մարդուն, որին քիչ էր տեսնում եկեղեցում... բայցարձակ Շմարտախօս էր և արդար:

Ամենքը սիրում էին նրան, ամենքի հետ վարուել գիտէր. ամենքին խրատներ էր տալիս, որովհետեւ խելօք էլ էր:

Իսկ առողջութիւնը.—նա յիշեցնում էր Մուշեց գէպի Ռուսաստան կամ Կ. Պոլիս նոր պանդխոտութեան գնացող երիտասարդների՝ իրենց երկար հասկներով, Ջլապինդ բազուկներով, յայն թիկունքներով և դուրս ցցուած առողջ կուրծքերով:

Եղօն այդպէս էր: Նրա ձեռքից վախենում էր գործը. նրա համար դժուարութիւն չոկար: Իւր ջըլապինդ բազուկներով նա եղին՝ կոտոշներիցը բոնած՝ ուղղութեան էր բիրում և տանում լծի տակ. երբ շունչ էր առնում, կարծես փոնչում էր. խրծիթը մտնեխս պէտք է սաստիկ ծռուէր, որ սև մազերով ծառկուած գլուխը առաստաղին ըրխիէր:

Գեղեցիկ էլ էր. սև, համարեա միացած, խիտ

1) Մի տեսակ տաճկական թղթախաղ է:

յօնքերի տակ փայլում էին նրա՝ բարութեամբ լըց-
ուած՝ մեծ սև աչքերը. կոր, մեծ քիթը չէր տգեղաց-
նում նրա լիքը ու թուխ դէմքը, որը աւելի թխա-
նում էր խիտ մոլուքից և սրածայր հաստ ըն-
չացքից:

Եղօն օրը մինչև երեկոյ գործում էր առանց յոդ-
նելու, ամբարում էր ձմեռուայ համար և երեկո-
յեան զնում էր տուն, ուր նա զուարձանում էր երե-
խայի հետ, կատակում էր իւր սիրուն կնոջ հետ,
որին նա անհուն սիրով սիրում էր և որից նոյն կեր-
պով էլ սիրվում էր: Զբաղեցնում էր իւր ծերունի
ծնողներին, որոնք կաթողին սիրում էին իրենց մի
հատիկ թոսուն¹⁾ մանչին... և երջանիկ էր նա այդ-
պէս՝ իւր արդար գործի և խաղաղ ու սիրելի ըն-
տանիքի մէջ:

Սակայն նրանք ցաւ էլ ունէին և այդ ցաւերից
ամենաանտանելին էին հարկահանները և զիւղի ա-
ւազակ բէդը:

Հարկահանը «զափթիէ»-ներով զիւղն էր մանում,
ուսում էր, խմում, թափում, կոտրում, յետոյ հա-
ւաքում էր հարկը թէկուզ այդ տարի զիւղացին և
ոչ մի խսկ տաւար ունեցած կամ յորեն քաղած լի-
նէր, թէկուզ սաղ տաւարը կոտրուած և արաե-
րը այրուած լինէր: Վերջին ունեցածները առնում էր.
Եթէ հակառակում էին՝ ծեծել էր տալիս, ժողո-
վում՝ քաղաք տանում, բանտի մէջ օրերով փթեցնում,
և կամ տանում՝ ձգում էր վաշխառուների ճանկը,
ուր խեղձ զիւղացին զրաւ էր դնում հողերը և գո-

1) Երկարահասակ և սիրուն:

հացնելով հարկահանին՝ տրտում տխուր վերադառ-
նում էր զիւղը:

Այստեղ նրան սպասում էր աւաղակը, որը գալիս
իլում էր կովը և կինը. — միայն այդ էր մնացել
զիւղացուն...

Որչափ ուրախ կը լինէր, եթէ իւր կեանքն էլ խը-
լին հետը: Ցաւեր էին զրանք, ցաւեր, որից ազատ
չէ ոչ մի թիւքահայ զիւղացի, ուր մնաց խեղձ
Ճղնաւոր Եղօն:

Եւ երբ միւս օրը Եղօն եկեղեցի գնաց աղօթելու,
երբ նա աղօթում էր Աստծուն, որ Աստուած
խղաց իրենց, վերցնէ նեղութիւնները, խնայէ փոք-
րերին. երբ նա բաւական աղօթած՝ կարծես ուզում
էր հաւատալ որ Աստուած պիտի լսէր իրեն, յան-
կարծ քահանայի ձայնը դիպաւ ականջին, որը ա-
սում էր.

— Աւաղակը ուզում է հեռանալ զիւղեցս, որդի՛ք..

— Ճնորհակալ ենք, աղաղակեց Եղօն, — Ճնորհակալ
ենք, որ գու լսեցիր...

— Բայց, ընդհատեց նրան քահանան՝ շարունա-
կելով. — Հեռանալու համար նա 500 ոսկի է պահան-
ջում զիւղեց...

— Ո՞խ Աստուած... մրմնջեց Եղօն զլուխը խո-
նարհեցնելով:

— Ուստի, շարունակեց քահանան, — ամեն տան
վրայ 5 ոսկի նշանակուեց, որ մի շաբաթուայ մէջ այդ
տաննեն զիւղապետին տան. 500 ոսկին պէտք է ժո-
ղովուի, աւաղակի բերանը ձգուի՝ որ երթայ...

— Ո՞րուեղից տանք... զուեցին զիւղացիները ամեն
կողմից:

— Այս, որտեղից... միմնջաց եղօն և նրա՝ դէպի գետին բարձրած՝ աչքերից երկու կաթիլ արցունք վլորուեցին այտերի վրայ:

— Ես զիտեմ՝ որպիք, մէջ մտաւ քահանան.— Ես էլ պիտի տամ: Էլ ի՞նչ անենք, կամ պիտի լունք և դիմանանք—որը անկարելի է—և կամ պիտի ամեն ունեցածներս ծախսնք և ճարենք 5 ոսկին:

Եւ լռեց:

Եղօն ոտքի ելաւ, առաւ չարուխները, ձեռքը բարձրացրեց, որ եկեղեցուց ենելիս վերջին անդամ խաչակնքէ, բայց բարձրացրած ձեռքը ցած ընկաւ... մի քանի երերուն քայլեր արեց, երեսը սեղանին բարձրեց, փորձեց աղօթել.

— Տէր... ուզեց ասել բայց ձայնը կտրեց և դուրս թռաւ եկեղեցուց, յուսահատութեամբ նատեց մի քարի վրայ և մտածեց:

— Ում աղօթեմ: Էլ նվ պիտի լսէ մեզ...

Սոսկմամբ ընդհատեց մտածութիւնը, վախենալով հետեւող խօսքերից. ընկաւ ծնկան վրայ և դառնապէս արտասուելով, ասաց.

— Ների՞ր, Աստուած իմ՝ քիչ մնաց մոռանայի քեզ... ախր, Աստուած, դու էլ շատ լուեցիր է. շատ անգութ մնացիր. չէ՞ որ մենք էլ մարդ ենք, մեզ էլ դու ստեղծեցիր, մենք էլ հաւասացինք քո որդի Յիսուսին, մենք էլ անդադար աղօթում ենք քեզ և սկզբից շնորհակալ լինում մեզ անելիք բարութիւններիդ համար: Դէ՛ բարի՛ Աստուած, խըդա՛ մեզ զթա՛ մեզ ողորմի՛ր մեզ: Էլի՞ երթանք վաշխառուին, էլի՞ հողերնիս զրաւ դնենք. այս անգամ էլ ե՞րբ կարող եմ այդ անօրէնի պարտքը իւր

կրկնակի տոկոսներով վճարել հողս ու ընտանիքս նրա կեղտոտ ձեռքերից ազատել...

Գլուխը ձեռքերի մէջ առաւ, արտասուքը խեղդում էր նրան:

Էլ չքիտակը խեց եղօն, որ իրեն պէս շատե՛րը չոգել էին եկեղեցու շուրջը և իրեն պէս և իրենից աւելի արտասուելով խօսում էին իրենց բոլորովին չըլսող Աստծու հետ...

Գ.

Ամեն վաճառական մի տեղ ունի շուկայում, ուր նա առևտուր է անում, բայց վաշխառուն ամեն տեղ է և սակայն մի որոշ տեղ չ'ունի:

Այդպէս էր և Մարտիրոս ազան—Մուշի հարուստներից մէկը որ միշտ շուկայումն էր լինում, սրանք նանութում նստում ժամերով, խեղճ գիւղացիներ էր գտնում, փող էր տալիս և մուրհակ առնում:

Նա լաւ զիտէր մուրհակ գրել այդքափը տաճկերէն զրել զիտէր: Մուրհակը Տաճկաստանում զրը վում է ամեն թղթի վրայ, միայն պէտք է տաճկերէն զրել (թէկ հայերէն էլ կարելի է, բայց այդ աւելի լաւ է) և տակը մի մարկայ կպցնել որի վրայ պէտք է ստորագրի պարտք առնողը:

Խօսար չըկայ, որ կարգալ չըդիտցող պարտք առնողը կարողանայ իմանալ թէ պարտք տուողը ձիշտ գումարն է զրել թէ աւելի:

Դրանից այնպէս լաւ օգուտ են քաղում վաշխ-

առուները, որ մեծամեծ հարստութիւններ են դիզում
և բազմաթիւ գիւղեր աւերակ գարձնում:

Վաշխառութիւնից լաւ բանում առևտուր քիայ
այժմ Թիւրքահայաստանում, որովհետեւ հարկերը
միշտ շատանում են և գիւղացին փող չ'ունի վճա-
րելու համար զինուրական, հողային և այն հա-
զար ու մէկ տուրքելը... տուրքելը ու տուրքեր...

Ո՞ւր տանի ծախելու իւր ապրանքը գիւղացին, ե-
թէ աւազակները ըսթալանն ու թողնեն որ ծախի:

Ահա նա առնում է մի ոչխար քաղաք տանելու
համար: Ծախում է ոչխարը և ստանում է մի քանի
զուրուշ: Սակայն իւր կնոջ մերկ մարմինը ծածկելու
համար նա շոր պէտք է առնի: Գիւղացին մոռանում
է ոչխար ծախելու բուն նպատակը այդ պէտքի ա-
ռաջ և առնում է շորելը: Երբ հաշվում են, գիւ-
ղացին վճարում է ունեցածը, բայց բանից դուրս է
գալիս, որ 100 զուրուշ պարտք է մնում վաճառա-
կանին:

—Կտորները ե'տ առ, ասում է գիւղացին, —ես
էլ փող չ'ունիմ:

—Հոգ չէ, ժպտում է վաճառականը, —ես քեզ
հաւատում եմ, զու մեր կիրակոսի տղան չ'ս, քեզ
մինչեւ 5—600 զուրուշ զուրբան լինի... առ էլ
տամ.. բայց շատ կրկնի, մեղք ես, յիտոյ դժուար
կրվարես...

Տրէշը... ձգել է թակարդը և այժմ բարեհաճում է
խղճալ նրա վրայ: Գրում են պարտամուրհակ, գիւ-
ղացին ստորագրում է ոչ թէ 100, այլ 150 զու-
րուշի մուրհակ և այդ նկատում է այնտեղ նստած
մէկը...

—Այդ ի՞նչ ես արել ասում է նա:
—Լոի՛ր, փսփսում է նրան վաճառականը, —ես
քեզ կրշահեցնեմ:

Գիւղացին վեր է կինում գնալու և, յանկարծ
յիշելով թէ ինչու համար էր քաղաք եկել յու-
սահատաբար կանգնած է մնում:

—Ի՞նչ կայ բարեկամ, ասում է վաճառականը, —ը-
լինի թէ եկել էիր «վերգին»¹⁾-ի համար փող գտնելու...

Խորամանկը այժմ էր յիշեցնում:

—Այս, գոյում է գիւղացին, —էլ ի՞նչ անեմ, ա-
ռանց փողի մնացի:

—Հոգ չէ, ասում է նրան վաճառականի մօտ նրա-
տած «մէկը», ես քեզ կրտամ ինչքան կ'ուզես:

Գիւղացին հրեշտակ տեսնել է կարծում:

Մի ժամկց յետոյ նա գիւղ է դառնում հարկի
համար 2 ոսկի ձարած, բայց իւր հողը վաշխառուի
մօտ 5 ոսկի համար գրաւ գրած...

Այսպէս ուրեմն վաճառականը և վաշխառուն՝ միա-
ցած հարկահանի հետ՝ տալիս են գիւղացուն առաջին
կործանիչ հարուածը... Այսպէս է լինում, երբ գիւղա-
ցին մի բան ունի ծախելու: Իսկ երբ չ'ունի, զա-
տապկ ձեռքով քաղաք է մտնում մի զառ իբր նուեր
առած իւր հետ՝ տալու համար այն հրեշ վաշխ-
առուին, որը պիտի կործանէր իրեն...

Այդպիսի վաշխառուներից մէկն է Մարտիրոս աղան,
բայց նա շատ անգամ էլ տանն է զոնվում, որովհետեւ
յաճախորդ շատ ունի և պէտք է նրանց գոհացնել:

Առաւոտ էր և Մարտիրոս աղան նստել զրում էր

¹⁾ Տուրք:

մուրհակներ՝ մի քանի դիւղացոյ համար, երբ սե-
նեակի շեմքի վրայ երեկյաւ մի սիրուն դէմք:

— Վայ, գոչեց Մարտիրոս աղան, — այդ դռւ ես, ձըդ-
նաւոր եղօ, մտի՛ր, մտի՛ր, աչքիս վրայ եկար, այդ
ի՞նչ է ձեռքինդ:

— Մի գառ է, աղա. քեզ ընծայ եմ բերել:

— Նատ շնորհակալ եմ... դէ՛հ, գառը տար ծառա-
յին և նկրս արի տեսնենք, անպատճառ մի փորի
ցաւ կ'ունենաս:

— Ի հարկէ, մումուաց Եղօն չարուխները արձակե-
լով — գիւղացին մինչև փորի ցաւ չ'ունենայ կըդայ
քեզ մօտ:

— Վայ, գոչեց նեղացած վաշխառուն, — ուրեմն ես
վատ մարդ եմ, որ ինձ մօտ միայն փորի ցաւի հա-
մար գան... հը, վատ մարդ եմ:

— Ինչու ես հարցնում, Մարտիրոս աղա, — ասաց
Եղօն, — դու գիտես, որ ես ճիշտ խօսող մարդ եմ:

Վաշխառուն գունաթափուեց, լուեց, սակայն և
մումուաց շարունակելով մուրհակ զրել:

— Կեցի՛ր, մումուաց նո անլսելի ձայնով, — հիմա քեզ
Ճշմարտախօս կըշնեմ...

Մուրհակը զրեց, ստորազբել տուեց, յետոյ փող
տուեց գիւղացուն և դառնալով Եղօին՝

— Ճգնաւո՞ր, ասաց, — ի՞նչ հրաման ունիս:

— Հրաման չունիմ, աղա, — խօսեց Եղօն, — այլ խըն-
դիր... մեր գիւղի աւազակը գիւղեց հեռանալու հա-
մար փող է ուզում 500 ոսկի. ամեն մէկիս 5 ոսկի
է ընկել վճարելու...

— Գիտեմ այդ, ընդհատեց վաշխառուն նրա խօս-
քը, — է, ի՞նձ ինչ:

— Զեմ ասում թէ՝ այդ քեզ յաւ է պատճառում,
ժպտեց դառնութեամբ Եղօն, — ոչ, ես եկել իմ, որ
5 ոսկի փող ուզեմ պարտք:

Վաշխառուն բարձր քրքիջ արձակեց.

— Հա, հա, հա, գոչեց նա, — վատ մարդն էլ փող
կ'ունենայ... ես վատ մարդ եմ, եղայր, աւելացրեց
3 նա լրջութեամբ, — վատ մարդը փող չի ունենալ:

— Սխալ ես, աղա, ժպտեց Եղօն, — մեր երկրի մէջ
այժմ միայն աւազակները փող ունեն:

— Ուրեմն ես աւազակ եմ, բարկայաւ վաշխ-
առուն, — համ, ես աւազակ եմ... դէ՛հ, էլ ուր ես նստել
ելիր գնա աւազակի մօտից, հայդէ... սորան նայէք,
Ճշմարիտ է խօսում ճգնաւորս, ինձ աւազակ է ա-
սում... ելիր նայինք...

Այդ միջոցին սենեակը մտաւ քահանան, Եղօի
գիւղական քահանան, որ մինչև մէջքը ծառելով, մի
ստորաքարշ ծիծաղ դէմքին, բարեկց՝ տեղիցը ան-
դամ չլարմուղ վաշխառուին և գնաց նստելու վերի
անկիւնում վաշխառուից փոքր ինչ հեռու:

— Բարի եկար, տէր հայր, գարձաւ նրան աղան, —
տեսնում ես ձեր ճգնաւորին, Ճշմարտախօս է, ինձ
աւազակ է ասում:

— Վայ, վայ, գոչեց քահանան Եղօին դառնալով, —
մեղայ ասա, որդի... Մարտիրոս աղան աւազակ...
որի՞ն կողոպտեց. փառք Աստուծոյ, բոլորիս բարերա-
րութիւն է արել միշտ և անում է... ջահիլ է, աղա,
— գարձաւ նա աղային, — նշանակութիւն մի ասպ
խօսքերին, Եղօն վատ տղայ չէ, նա արդար տղայ է,
նորէն քո հովանիդ պակաս մի անիլ վրայից:

— Հոդ չէ, ես կըներեմ, խօսեց վաշխառուն, — և

կըտամ քեզ, Եղօ, Հինգ ոսկի մէկ տարի ժամանա-

կով. Հինգ ոսկիի համար էլ մէկ ոսկի տոկոս կ'առնեմ:

— Եատ չէ^o, աղա, հարցրեց Եղօն,—առաջին ան-

գամ և ոսկիի համար միայն կէս ոսկի տոկոս ա-

ռիր... սակայն հոգ չէ, գրիր մուրհակը:

— Իու կարծեմ հայերէն կարդալ գիտես, այնպէս

^{չէ}:

— Իիսէ, գիտէ, մէջ մտաւ քաշանան,—ինձնից

լաւ գիտէ:

Եւ վաշխառուն գրիչն առաւ ու տաճկերէն գրեց

մուրհակը, հողերն էլ «իսթիլալ»¹⁾ տակ առաւ,

ստորագրել տուեց և հինգ հատ լիրա տուեց Եղօին:

Յետոյ, շատ յետոյ, երբ արդէն 5 ոսկին 30 ոսկի

էր զարձել, Եղօն իմացաւ, որ մուրհակի մէջ 10 ոս-

կի էր գրուած:

Եղօն միամտուեց, սակայն հոգին խիստ ալր-

տում էր և երբէք աղօթք չէր գալիս միաքը:

Երբ գուրս էր գալիս տնից, քաշանան նրա ե-

տելից հասաւ և միասին վնացին դէպի գիւղը՝ խօ-

սակցելով:

Այդ խօսակցութիւններից մի քանի խօսք էր միայն

միուր պահել Եղօն երբ տուն մտաւ:

— Ի՞նչպէս վճարեմ այս փողերը, տէր հայր, հարց-

րել էր Եղօն քաշանայից:

— Որդի, ասել էր քաշանան, — երկիր վարելով

դու հազիւ կարող ես վաշխառուիդ ընծան մատա-

կարարել, որովհետեւ, ամեն մի բերքիցդ եթէ ընծայ

1) Իսթիլալը մի պայման է, որով պարտատէրը գրաւում է պարտապանի կարքը, եթէ գերջինս փողը ըըտալ ժամանակին համաձայնութիւնից է կախուած իսթիլալ անելը:

ըրտանես նորան, այն ժամանակ աղան գանգատ կր-
տայ և կ'երթաս բանտի մէջ կրթմես և կամ թէ
հողը ձեռքիցդ կ'երթայ:

— Ի՞նչպէս, գոչեց զարմացած Եղօն,—իսկ մի տա-
րի ժամանակը...

— Այդպէս բան աղան սովորութիւն չ'ունի զրելու
իւր մուրհակի մէջ:

Եղօն թակարգն էր ընկել. գլուխը ծռեց և մռմռաց.

— Ապա ի՞նչ անեմ:

— Գնա Կ. Պոլսի. ասում են, այնտեղ աշխատանք
կայ. աշխատիր և ուղարկիր, իսկ երբ բացակայ լի-
նես, վաշխառուդ իրաւունք չ'ունի ձեռք դպջնելու
հողիդ մինչեւ որ ետ գառնաս:

Կ. Պոլսի Պահճէ-կափու կոչուող Ասիական ափի
նաւահանգստում փոռուղ թաղի մէջ՝ մաքսատունից
ոչ շատ հեռու՝ գտնվում է Ջէֆէրբէյ խան անու-
նով հինգ յարկանի գեղեցիկ հիւրանոցը, որի ներ-
քին յարկը կազմում են փառաւոր մթերանոցներ և
խանութներ:

Ցերեկները այդ մթերանոցներից՝ մի կողմից՝ ելնում
են ապրանքների մեծամեծ հակեր և միւս կողմից՝ մաք-
սատունից գալով՝ լցնում են պակսած տեղը: Ամեն կող-
մից գալիս են մշակները, որոնք ուսերի վրայ առած
ձոճող ամուր կլոր փայտը, անց են կացնում նրա վրայ
հակը և, չափաւոր ու կանոնաւոր քայլերով, ձոճեց-
նելով փայտը բեռի հետ՝ տանում են ապրանքներ
այս ու այն կողմ:

Հուժկու են այդ մշակները իրենց՝ փափուկ կոշիկ
հագած և սրունքները լերկ՝ ոսներով, բայց, ջլապինդ
բազուկներով. երկարահասակ են, մեծ քթերով, գեր-

Ժամերով զբաղուած է իւր յիշողութիւններով և չէ կարողանում քնել, չոր անկողնի գետնի վրայ ընկած և զլսին բարձ արած իւր կոշտ ու անհարթ պղբեկը... կամ կարդում է տնից ստացած նամակը հազարիքորդ անգամ, գուցէ և արտասվում է...

Սյու այլպէս է լինում, երբ պանդուխար մենակ է և զեռ նոր է. իսկ հինք գտնում է ընկերներ և գիշերը անց կացնելու համար՝ առաջ գնում է մի զինետուն, ուր նա մոռանալու համար իրեն անից լուր բերող տիտոր-տիտոր նամակները՝ իմում և անյագաբար, և յետոյ գնում է իւր օրական աշխատանքի վերջին մնացորդն էլ պոռնիատան տայռ...

Այսպէս է լինում պանդուխար այդ անդունի տիղմերի մէջ և, եթէ հաշեւ բռնուի, չըկայ 100-ից 10-ը, որը ծանօթ չըլինի զինետունների ու պոռնիատունների հետ, որ մտաբերելիս լինի անցեալ պարզ կեանքը և զբաղուի իւր յիշողութիւններով...

Աշունը իւր վերջին էր մօտենում. մի գեղեցիկ օր էր զեռ ևս, երբ «Թայիրի է» ընկերութեան Վրսժորի վրայ պտտող շողենաւատկներից մէկը՝ Պօյուք-դէրէ գնալու ժամանեակ՝ անցաւ նեղոցի մէջ մննող մի շողենաւի կողքից, շողենաւի, որի ափերի վրայ յենած ապշօրէն ամեն կողմ էին նայում գզզուած, այլանդակ ու կեղտու հագուստներով բաղմաթիւ առողջ, գեր և երկարահասակ մարդիկ:

Պանդուխանների վերջին շողենաւն էր, որը կէս ժամից յետոյ կանգ առաւ մաքսատանից փոքր ինչ հեռու, խարիսխ ձգեց և սպասեց՝ որ մաքսատան պաշտօնեանների ներս մտնելուց յետոյ՝ ազատուի այդ վիտացող բազմութիւնից:

Դէմքով և վառվուն սե աչքերով, սակայն միօրինակ ծանր աշխատութիւնը մաշել է նրանց. միայն մի քանի տարի են կարողանում այդ ծանր ճոճանակները կրել իրենց լայն ուսերի վրայ, որոնք, լինելով սկզբում այնչափ ուժով, հետզհետէ թուլանում են և թուլացնում իրենց հետ ամրող ձեռքը:

Մշեցիք են դրանք:

Դեռ այդպատուածուր մշակութիւնն է... պիտի տեսնել նրանց մաքսատան մէջ հակերը մէջքներին, փորաքամակ, կեղտու հագուստով, հետզհետէ մաշուող կերպարանքով:

Պիտի տեսնել Նալաթիայի կողմը խաների մէջ ընկած մշակներին իրենց կրելքներով (մի տեսակ բարձի նման շնուածք է այդ, որը միշտ մէջքի վրայ ունին և որին են յենեցնում բեռը), պիտի տեսնել Պալոգ բազարում, Թախտէ-Կալէում, ուր նրանք ընկած են ամենակեղտու անկիւններում. սրճատունների մէջ—Սիրքէջում, խաների մէջ—ամեն կողմ և գինետունների անկիւններում—Նալաթիայ և Սամաթիայ և Ենիկափու և Կումկափու...

Պիտի տեսնել նրանց՝ ոտարորիկ, երբեմն գլխաբաց, ջրհան գործիքը ուսերի վրայ դրած՝ փողոցում վազելիս և որոտաձայն գոռալիս, երբ մի որ և իցէ տեղ հրդեհ է լինում. եւ ով է այն ջրհանակիրը, որ կարողանայ մշեցու պէս ջուր խփել, կրակը մտնել, ազատել ամենայն պարզութեամբ, անձեր, անգնահատելի մնալ և նորից երթալ կրծելու իւր մի կտոր ցամաք հացը՝ ընկած մի խանի կամ մի սրճատան անկիւնում։ Սյուտեղ նա, եթէ զեռ նոր է կ. Պոլիս մտել, մտածում է իւր հայրենիքի վրայ...

Հազեւ թէ շչակի ձայնը կտրուեց, որ չորս կողմից շոգենաւի մօտ հասան բազմաթիւ նաւակներ, որոնցից շոգենաւ ցատկեցին նաւաստիներ և, շատ անդամ ուժով, նաւակների մէջ լըրին ձանապարհորդներին՝ ափը տանելու համար: Կեղտոտ անկողիններ, ծուէնների կտորներից փաթաթած կալոցներ և մի քանի հատ կտաւէ շապիկներ էին, որ պատիւ ունեցան նայելու մաքսատան նաւակամատոյցի վրայ օսմանեան մաքսային պաշտօնեաները, որոնք այդ անելուց յետոյ մէկմէկ նրանց թողնում էին որ անցնեն և մշեցիների, վանեցիների ու շատախցիների այդ աշապին բազմութիւնը միմեանց ետեից շարուած սկսեց գուրս գալ մաքսատան միւս գոնից՝ Պահճէ-կափուի լայն փողոցի վրայ:

Ոչ ոք նրանց վրայ ուշք չէր դարձնում. ամենքը սովորել էին ամեն տարի և տարին հինգ-վեց անդամ կրինուղ այդ խղճալի տեսարանը տեսնել:

Կային, որոնք շոգիտէին, թէ ուր գնան, և շուարած կանգնել մնայել էին դրան առջե. կային, որ հէնց մաքսատան բակի մէջ էին ցած դրել իրենց թեթև կապոյը և նստել՝ իրենց բարեկամներին էին սպասում, և կային, որոնք փողոցէ փողոց ընկած փընտում էին իրենց ծանօթների բնակած խաները ու մթերանոցների գոները. իսկ շատերը արդէն՝ իրենց դիմաւորող հայրենակիցների հետ համբուրուելուց յետոյ՝ իրար տգեղացած, նիշարացած, երկարացած կամ ծերացած էին գտնում և իրենց տան մասին միմիանց բարձրաձայն հարցմունք անելով գնում էին զանազան կողմեր:

Ամենքը քաշուեցին: Նաւամատոյցի վրայ մնում

էր միայն մի երկարահասակ մշեցի, որ շուարած կանգնել և իւր չորս կողմն էր նայում. չըդիտէր՝ ուր գնար, ի՞նչ անէր, որին դիմէր. նրան միայն ասել էին՝ «գնա կ. Պոլիս, այնտեղ քեզ համար գործ կը դտնես»՝ և ահա նա եկել էր հազար ու մէկ նեղութիւններ քաշելով, տասն և վեց օրուայ ձանապարհը ոտով մի ամսուայ մէջ գալով. . . եկել մտել էր կ. Պոլիս... տեսնում էր նա իւր տեղից Ղալաթիայի երկաթէ կամուրջը, որի վրայ ման էին գալիս հազարաւոր մարդիկ, տեսնում էր ջրի վրայ ամեն կողմ նաւեր, շոգենաւեր, այս-այն կողմ սլացող նաւակներ... տեսնում էր դիմացը հետզետէ բարձր դիրք ստացող Ղալաթիան իւր հսկայական շէնքերով. . . ամեն կողմ՝ խառնուրդ, անց ու գարձ. ամեն կողմից՝ զանգսների, շշակների, մարդկանց, կառքերի և այլն խլացնող ձայներ, անտանելի աղմուկ:

Եւ այդ խառափի մէջ ուր գնար նա, ի՞նչպէս գործ դտնէր, որին դիմէր. դիշելոն էլ մօտենում էր,— որտեղ պիտի քնէր. . .

— Ի՞նչ ես կանգնել այստեղ կորսուիր, — լսեց նա իւր ականջի ետեից և տեսաւ իւր առջե մաքսատան ծառայողներից մէկի դաժան կերպարանքը:

Վախիցաւ ու քայլեց: Գնումէր, առանց իմանալու, դէպի գուռը և, երբ գոնից գուրս եկտւ, յանկարծ շլացած կանգ առաւ, որովհետև մտել էր Պահճէ-կափուի ամենաբանուկ զլիաւոր փողոցը, որտեղից անցնում — դառնում էին բազմաթիւ կառքեր և լացող ձիաքարշ երկաթուղու երկյարկանի կառքը:

Սյդ հրէշային բանը ի՞նչ էր, որի մէջ այդ չափ

բազմութիւն էր լցուել և որ միայն մի ձի կարողանում էր քաշել ու արագութեամբ տանել:

Մեծամեծ մթերանոցներ, որոնց զրսի կողմում ապակեայ դարանների մեջ շարուած էին զէնքեր, զանազան տեսակ շացնող փայլուն բաներ, որոնք որչափ գեղեցիկ էին և որ երեք չէր տեսել նա:

Յանկարծ զգաց, որ մէկը բռնում է թեից. նայեց. կողքին կանգնած էր իւր նման հագնուած մի ժըպտող մշեցի, որը քաշելով նրա թեկիցը, ասում էր.

— Գնանք, ճգնաւոր, այստեղ մի կանգնիլ:

— Կարապետ... զուեց նա, ճանապելով իւր հայրենակցին և ջերմագին համբուրուելով նրա հետ, — այդ դու ես, ախ, ի՞նչ լաւ եղաւ... չէի իմանում՝ ինչ անեմ... տեսնում ես, այս բոլոր փայլուն բաները, աղմուկը, կառքերը, փառահեղութիւնները, Կարապետ, այդ բոլորը փախեցնում են ինձ:

— Վախենալու ոչինչ չըկայ, գնանք մեր խանը, սրան Ստամբօլ կասեն, դեռ ինչե՞ր պիտի տեսնես:

Նրանք քայլեցին դէպի վեր՝ Ենի-Զամիի կողմբ:

— Ստամբօլի պէս քաղաք կայ, խօսեց Կարապետը, — բայց թող մնայ դեռ զրանք... այս ի՞նչպէս եղաւ, որ դու էլ եկար մեր կողմերը... կամաց, մի քիչ ետ քաշուիր, թրամվան քեզ կըկոխէ...

— Թրամվան ո՞րն է;

— Այ, այդ երկու յարկանի կառքն է, որ դալիս է:

Եկաւ ձիաքարշ կառքը և ոլանալով անցաւ ձիշտ մեր երկու հայաստանցիների կողքից՝ սաստիկ փախեցնելով նորեկին:

— Վախեցար, ծիծաղեց Կարապետը երբ կառքը

անցել էր, — վախենալու ոչինչ չըկայ, նա այդ երկաթի գծերից գուրս չե գալ երեկք:

Ճղելով բազմութիւնը, հրուելով և հրելով՝ հազեւ կարողացան նրանք հասնել Զավար-բէյ խանի մօտ, ուր տանում էր Կարապետը նորեկին: Մօտենալով զրան մօտ եղող մի մեծ ու գատարկ սենակի՝ նրանք ներս մտան:

Այդ սենեակի պատերի տակ զանազան տեղերում դրուած էին՝ նորեկի ձեռքումը բոնածի նման՝ 5—6 կապոյներ, որոնցից մէկի վրայ նատեց կարապետը, պատուիրեց նորեկին, որ իրեն կապոցն էլ զնէ գետին ու նստէ, և ասաց ծիծաղելով.

— Վայ, ճգնաւոր Եղօ, վայ, դու էլ Ստամբօլ, Է, բարի եկար, լաւ առողջ ես՝ տեսնում եմ, մաշալահ, բոյդ ու կուրծքի ասլանի բջի ու կուրծքի են նմանում, իսկ ե՞ս...

— Դու էլ ինձ նման էիր, Կարապետ, ասաց տիրութեամբ Եղօն, — բայց այժմ փշեմ՝ ցած կ'ընկնես, այդ ինչու ես այդպէս եղել...

— Կացիր, մէկ քանի ամիս թող անցնի, — քեզ էլ կըտեսնենք. սրան Ստամբօլ կ'ասեն, այս քաղաքը առողջ մարմին, լայն թիկունք, հուժկու բաղուկներ չե սիրում. այդ ի՞նչ է, կոպիտ խը մը ըլ¹⁾... պէտք է լինել նուրբ, բարակ, սիրուն, մէջքը բարձկ... բարձկ... վեզը բարձկ... այ, թող նայէիր, քեզ նման սկի մարդ կա՞ր, չէի՞ր տեսնում, թէ ինչ պէս շատերը քեզ էին նայում... ախր անսովոր բան

¹⁾ Պօլսեցիք գաւառացիներին նախատելու համար, նրանց կոչում են խը մը ըլ. որ նշանակում է «անծար, անշնորհք, իհմար, կոպիտ»:

Է այստեղ քեզ նման մի մարդ տեսնել... «առ ւ առ ւ»¹⁾-ները, «Հանձ»²⁾-ները այդպէս չէն է վեր խը մը բըլե³⁾ չեն սիրում... այ, էֆէնդին, եթէ այդպէս մնաս, քեզ տուն չի ուղարկիլ միս կամ հաց տանելու՝ «առայքը կը վախենան կոր, հանըմ էֆէնդին կը մարի կոր վախէն»...

Եղօն ապշութեամբ լսում էր այս տարօրինակ ձառը և ոչինչ չէր հասկանում. միայն այն հասկացաւ, որ Ստամբոլում չէ կարելի առողջ և հումկու լինել: — Վայ, գոչեց նա, — ապա ի՞նչ անեմ:

— Հե՛շտ է, ծիծաղեց Կարապետը, — մի երկու ամիս Ճոճանակաւոր բեռ կը կրես և այնուհետեւ նա զեք խը մը բըլը⁴⁾ երը լինես, — սիրուն ես բաւական, — քեզ «Հանըմ էֆէնդին» միշտ կը հրամայէ, որ տուն երթաս, տան համար բան-ման առնես, «տղաքը խաղացունես, քիչ մ'ալ իրեն խնդայնես քու խօսքերովդ...» այն ժամանակ ահա փող կ'աշխատես, մանաւանդ եթէ միշտ զուարթ եղար, էֆէնդիի դժոխյին հայհայնքներին պատասխանելու փոխարէն նրա զարնող ձեռքը լիզեցիր և «Հանըմ էֆէնդին» քմահաճոյքներին գոշութիւն տուիր: Ես երաշխաւորում եմ, որ եթէ այդպէս լինես, պարաքդ էլ կը տաս ու քո վաշխառուիր էլ մի քանի լիրա կը կառողանաս տոկոսով պարտք տալ:

— Ախր ես գրանց ոչ մէկն էլ չեմ իմանում:

— Կը սովորես կամսց-կամսց: Էգուց ես էֆէնդուն կ'ասեմ, դու էլ մեր մէջ կը մտնես և «Համբալ» կը լինես. յետոյ կամաց-կամաց, երբ ծանօթանաս շա-

¹⁾ Տիկին, մօրաքոր: ²⁾ Տիկին (պատուաւոր): ³⁾ Անատուն խըմբըլ, հսկալ խըմբըլ: ⁴⁾ Բարակ (հոճուն):

տերի և ամեն բանի հետ, կը հասկանաս, — դու խելք ես, — կ'իմանաս թէ ինչ պիտի անես... աշխատիր դա լեզուդ էլ փոքր ինչ փոխելու, «զիմ վաց», «լէ», «Հըմլա»՝ այսպիսի խօսքերը թող և «կոր, նէ, ասանկ, ատանկ»՝ գործածիր, քո աղայիդ էլ միշտ «էֆէնդի» ասա, զրագրին «պարոն»: Վերջապէս «նազիք» եղիր, բարակցի՛ր, բարակցի՛ր...

Եղօն, որ ախրութեամբ զլուխը կախել էր, ընդհատեց նրան, նայեց տխուր աչքերով և ասաց դառնութեամբ ու վախկոտ ձայնով.

— Կարապետ, սոսկալի է, ես վախենում եմ այդ բոլորից...

— Յիմար ես, բարեկամ, ծիծաղեց Կարապետը, — վաշխառուդ՝ պարաքը, հայրենիքում կինդ, ծնողքդ ու որդիքդ՝ հաց և այստեղ փորդ կշտանալ՝ ին ուղում... ոչ ոք քեզ հաց չի տալ... լսի՛ր ինձ, քանի կարող ես բարակցիր, որչափ բարակիս՝ այնչափ շատ փող կ'աշխատես:

Երբ Եղօն մենակ մնաց, զլուխը ձեռքերի մէջ առաւ և գառնութեամբ արտասուեց. յետոյ ծունկ չոքեց, աղօթեց և ասաց.

— Աստուած իմ, ինձ սիրո տուր և օգնիր, առանց քեզ կորսուելու եմ...

Սրբեց արտասուքը և միմնջեց.

— Դու, արտասուք, մի պակսիլ աչքիցս, առանց քեզ՝ մոռանալու եմ:

Խե՞ղած ձգնաւոր Եղօն... վերջին աղօթքն էր այդ և վերջին արցունքները, որ նա թափում էր, յիշելով իւր հայրենիքը և ծնողքը, որդին ու կինը:

b.

5

— Եա Մշու Սուլթան Սուրբ Կարապետ, — գոչեց
առաջին անգամ Եղօն, երբ բեռան փայտի մի ծայրը
ուսի վրայ առաւ:

Եւ գրանից յետոյ նա օրը մինչև երեկոյ բեռ էր
կրում:

Որչափ ուրախացաւ նա, երբ առաջին անգամ
ստացաւ իւր մի շաբաթուայ աշխատանքը, երբ այդ
փողը նա կապեց, կապկապեց իւր թաշկինակի մէջ՝
զրեց ծոցը և երբ զգաց, որ վաշխառուին հասնելիք
հինգ ոսկիից աշխատեց ու տուեց մի քանի «մէջիդ»
(Նրա համար՝ ունենալ նշանակում էր վճարել պարտ-
քը): Որչափ տրտում էր, երբ պէտք էր լինում
այդ փողից ուտելիքի տալ Եւ ի՞նչ էր այդ ուտե-
լիքը, — մի կտոր հաց ու պանիր:

— Աստուած ի'մ, գոչում էր, — այս ուտելիք ըլինէր:
Եւ յետոյ, երբ մտածում էր, որ առանց ուտելու
չէր կարելի.

— Հոդ չէ՛, ասում էր, — միայն հաց ու պանիր
կ'ուտեմ..

Այլ ևս կիւրակին, տօնը և պաս օրը նրա միտ-
քը չէր ընկնում, — ըսկար նրա համար. — նա միշտ
վաշխառուի մասին էր մտածում:

Եւ ընկերները միշտ ծիծաղում էին նրա վրայ:
— Ճգնաւոր Եղօն փող է ժողովում, ասում էին
նրանք:

Անցաւ երեք ամիս: Տօն էր այն օրը, երբ Եղօն
դէպի «Երկիր» — հայրենիք ուղարկեց վեց ոսկի, մէկը՝
Ճնօղներին ծախսելու և միւս ծոր՝ պարտքը տալու:

Այժմ հանգիստ էր և այլ ևս վաշխառուի վրայ
չէր մտածում: Ընկերները ամեն երեկոյ զբօննելու
էին գնում, իսկ նա պառկած, մոքով իւր հայրե-
նիքը — իւրայինների մօտ էր թուզում. աղօթում էր
և աղօթելով քնում: Սակայն այսպէս ըրմնաց միշտ.
մի օր, երբ ընկերները գնում էին զբօննելու և երբ՝
ամեն անգամուայ պէս՝ փորձեցին Եղօնն էլ իւնց
հետ տանել, նա չընդդիմացաւ և գնաց նրանց հետ:
Ընկերները զարմացան:

Մտան մի գինետուն և օղի ուղեցին. խմեցին և
Եղօնն առաջարկեցին:

— Ինչո՞ւ էք խմում այդ անպիտան բանը, հարց-
րեց Եղօն:

— Խմի՛ր, Եղօ, գոչեց կարապեաը, — մեր քէֆը այս
է, պանդուխտը Կ. Պօլսում քէֆ անելու միայն այս
միջոցն ունի... խմիր ու մոռացիր...

— Մոռանա՞լ. ի՞նչը, տունը, տեղը, ծնօղքը...
Յանկարծ մէկը կուացաւ գէպի նա և ասայ.

— Յաւերը...

— Այս, ցաւերը, — մոմուաց Եղօն և մի ումապով
դատարկեց օղին, յետոյ շանթահարի պէս գաւաթը
ձգեց և ընկաւ գետին:

Նրա ծոցից մի թուղթ դուրս թռաւ. — Նամակ էր:
Նամակը բացին.

«Եիրելի որդիս,

Վեց ոսկին ստացանք, հինգը վաշխառուին տուինք,
բայց վաշխառուն 5 ոսկի ևս ուղում է տաս ոսկիի
տոկոսի հետ. ասում է, թէ քեզ 10 ոսկի է տուել:
Մեր կովը քաշեց տարաւ, այլ ևս ցամաք հաց մի-

այն ունինք ուտելու, սակայն հոդ չէ այդ մեզ հա-
մար: Դարձի՛ր, որդի, մայրդ մեռնելու մօտ է և քեզ
տեսնել է ուզում: Կինդ լաց լինելուց չէ դադրում:
դարձի՛ր որդի»...

Այս էր գրում հայրը Եղօին:

Կարդացին, օղիի գաւաթները ցած դրին լոռու-
թեամբ՝ ընկած Եղօին շալկեցին և դուրս գնացին
գինետումից:

Այլ ևս Եղօն նոյն Եղօն չէր. Նիհարցել էր և
բարակցել... գեղնել էր և թուլացել. միշտ տիսուր
էր. երեկոյեան արտասուքով բարձն էր թրջում և
այլ ևս չէր կարողանում ազօթել միայն յուսահա-
տաբար վեր էր նայում և մռանում.

—Աստուած մռացել է հային...

Նոր խմացաւ, որ բոլորը, որոնք իրեն շըջապատել
էին—իրեն հայրենակիցները, առաջ մի-մի Եղօ էին
եղել և ունեցել էին մի-մի հոգէառ հրեշտակ հայրե-
նիքի մէջ:

Եղօն սկսեց խմել և խմել անյագաբար...

Աշխատածը օղիի էր տալիս...

Եղօն և իւր թշուառ ընկերները գինետան մէջ
ձեռք ձեռքի տուած հայրենական պարեր էին պա-
րում, ախուր երգեր երգում, յետոյ նորից խմում և
մի-մի նստալսնի տակ ընկնում՝ քնում. . .

Ցերեկը աշխատում էր՝ մռանալու համար, գի-
շերն էլ խմում՝ նոյն նպատակի համար:

Մի քայլ էր մնացել և ընկերները այդ քայլն էլ
անել տուին Եղօին:

Մի գիշեր Դարձիայ տարան, մի տան մէջ՝ շըջա-
պատուած մի քանի հասարակաց կնիկներով՝ խմե-

յին, զինովացան և Եղօին ձգեցին մի կնոջ զիրկը...
Այս բոլորը քաշեց Եղօն:

Ուղիղ մի տարի էր, որ նա կ. Պոլիս էր, այժմ
նրան այլ ևս «կոպիտ խրմբը» չեն ասում, այլ
«նապիք խրմբը» ... էֆէնդին նրան էր տալիս տուն
տանելու իրեղէնները և Եղօի հետ, որ մի տարի տ-
ռաջ մի կնոջ երես իսկ չէր նայում, այժմ «Հանրմ
էֆէնտին» կատակներ էր անում, պատմել էր տա-
լիս Մշյ սովորութիւնների մասին, նրա կնոջ վե-
րաբերմամբ հետաքրքրվում էր և «մարելու չափ»
ծիծաղում:

—«Խնդալէս կլճաթիմ կոր»... ասում էր:

Խղճալի Եղօն ծիծաղում էր «Հանրմ»ի հետ և
նրան իւր կնոջեց աւելի սիրուն էր գտնում.. .

Եւ մի օր Եղօն մի երազ տեսաւ, մի սոսկալի ե-
րազ... Քնել էր մի զինետան անկիւնում և ահա
«Հանրմ»-ի նկարագրած «փէրի»-ներից մէկը մօտեցաւ
նրան, առաւ իւր գիրկը, զգուեց, համբուրից, յե-
տոյ բարձրացրեց նրան օղի մէջ, տարաւ, սրայաւ
զէպի հեռու, յետոյ կանգ տառաւ, բաց թողեց նրան
ահագին բարձրութիւնից և նրա ետեկց մի այնպի-
սի գիւտական քըքիչ արձակեց, որ նա սոսկաց... . .
բայց չը զարթնեց, որովհետեւ ընկել էր մի փա-
փուկ, խիստ փափուկ հօղի վրայ... և այդ հօղը թէկ
պահպանել էր նրան ջարդուելուց, սակայն այրում
էր նրան, այրում էր կրակի պէս... վեր է թռչում,
թափ է տալիս վրայից հօղը, սակայն միշտ այրվում
է... և այրվում է սիրար...

Նայում է նա իւր չորս կողմը... երեռում են տներ,
իսկ իւր ընկած տեղում ոչինչ չը կայ, միմիայն մի

կառը քանդուած պատ, որի վրայ նստած մի ալե-
խառն ծերունի արտասվում է դառնապէս:

Սոսկալով ձանաչումէ Եղօն իւր գիւղը... և այդ
տաք հողը, որի վրայ նրան ձգել էր զիւային «փէ-
րին», իւր տան մոխիրն էր...

Եւ արտասուող ծերունին՝ իւր հայրն էր:

Վաղեց դէպի նա, չը տեսաւ նրա մօտ իւր մօլը,
կնոջը և որդուն:

—Հայր, գոչեց նա, —ուր են նրանք:

Ծերունին նրան նայեց տխրութեամբ և մատով
միւս կողմը ցոյց տուեց: Եղօն նայում է

Ընկած է գեանին կնոջ դիակը մօր դիակի վրայ և
որդին նստած խաղում է իւր մօր մազերի հետ...
Ճշաց և վեր թռաւ:

Այս անգամ նա զարթնեց, վեր կացաւ ու նստեց:

—Ո՞հ, ինչ սոսկալի երազ մոմնաց նա, —արդեօք
«երկում» ի՞նչ է եղել, երկար ժամանակ է, որ ոչ
նամակ եմ զրում ոչ էլ սուանում...

Դուրս եկաւ զինետունից. մի զով գիշեր էր. մօ-
տեցաւ ջրին, լուացուեց, յետոյ դէպի բնակարանը
գնաց, մտաւ սենեակը ու նստեց անկողնու վրայ:

—Մուացայ հօրս, մօրս, կնոջս և որդուս... մո-
ռացել էի... ով գիտէ, ինչե՞ր է եղել այնտեղ:

Մի գաւաթ ջուր խմեց, —բերանը շատ դասն էր
խմած օղիից:

—Թու, թքեց նա, —անիծեալ օղի, որ Եղօնին
շուն շինեցիր, որ Եղօնին մեռցրիր, որ Եղօնին ծնո-
ղասպան, Աստուածուրաց, ազգուրաց դարձրիր, որ
Եղօնին հրեշտակից գեի փոխեցիր...

Սկսեց յուղուած ձեմել սենեակի մէջ:

—Ի՞նչ է այս... ով արաւ ինձ այսպէս... ես այն
Եղօն եմ, որին յարգում, սիրում էին իւր մաքրու-
թեան, ծշմարտախօսութեան, ծնօղասիրութեան հա-
մար... ես այն Եղօն եմ, որ կնոջեցս բացի ուրիշ
կին չը զիտէի... թողել մաքուր օգով երկիրս... թո-
ղել սիրուն կինս, թողել հայրս ու մայրս... պատ-
ճառ եղող, թող Աստուած քո տունը քանդէ:

Նստեց, անկողինը փոեց և շրերով ընկաւ անկողիի
վրայ ու աչքերը փակեց: Կէս ժամի չափ նա այդ
դրութեան մէջ լուռ ընկած մնաց... Յանկարծ կա-
տաղութեամբ վեր թռաւ, սեղմած բռունցքները
բարձրացրեց և...

—Եյհ, գոչեց, —երթալ պէտք է... երթալ և...
վեժ առնել...

Զ.

Երկու օր յետոյ Եղօն Տրապիզօն գնացող մի շո-
գենաւ նստեց:

Նաւը նստելուց առաջ նա երկար, շատ երկար տե-
սակցութիւն ունեցաւ մի վառվուուն երիտասարդի
հետ, որը մաքսատան մէջ հանդիպել էր նրան,
հարցըրել էր, թէ ուր է զնում իմացել էր նրա ցա-
ւերը և, քաշելով նրան մի կողմ ժամերով խօ-
սել էր նրա հետ, յետոյ նրանք համբուրուել էին,
երիտասարդը շտապմամբ մատիտով մի թղթի կտո-
րի վրայ մի քանի տող գրելով տուել էր նրան և
Ճանապարհ էր ձգել՝ ասելով.

Թուղթը Մուշ կրտաս տիրոջը...

Եւ երբ Եղօն շոգենաւ մտաւ, հետաքրլքրուեց, երիտասարդի տուած թղթի կտորը բաց արեց և կարդայ.

«Սիրելի Հրանտ,

Հետաքրլքրուեր գրաբերովս, ցաւերը իմացիր և խլրատ տուր:

Արշաւիր»

— Եյ՞ս, մռմռաց նո՞ւ թուղթը ծալելով և կողքից կախուած հասարակ պայուսակի մէջ դնելով,—այ՞ո, քիչ մնաց յուսահատուեի և այդ երիտասարդը կեանք տուեց ինձ... Ղուրբան քեզի, սիրուն տղայ, Մուրք Կարապետը թող քեզ քո մռւրադիդ հասցնէ...

Երեք օրից յետոց Տրապիզոն իջաւ, խառնուեց կարին ուտքով գնացող մարդկանց կարտաւանի հետ և, քսաներորդ օրը Ա. Կարապետի գելեղմանը համբուրելուց յետայ, քսանմէկերորդ օրը Մուշ հասաւ:

Այնտեղ նրա ականջին դիպան սոսկալի լուրեր:

Ամեն կողմ քուրդերը սկսել էին կոտորել և թալանել. Էլ մի կտոր «Հալալ հաց ուտել անկարելի էր: Բայց քուրդերից աւելի սոսկալի էին հայ վաշխառուները, որոնք, իրենց՝ սուրից աւելի մահարկու՝ մուրհակները ձեռքներին, խլում, կողոպտում էին և մուրհացիկ մեացողների վրայ էլ կուշտ կուշտ ծիծաղում: Նրանք լրբութիւնը մինչև այն աստիճանի էին հասցրել որ տոկոսի փոխարէն համարձակվում էին գիւղացիներից նրանց գեղեցիկ կնիքներին կամ հարսերին պահանջել մի քանի օրուայ համար...

Նա ինքը—Եղօն, Մշյ շուկայի մջ, իւր ականջներովը լսեց, թէ ինչպէս մի վաշխառու գոռում էր իրեն աղաջող մի գիւղացու վրայ:

— Եթէ փող չունիս, կնոջ շալվարը ծախսիր...

— Լի՛րը վաշխառուներ... քիւրդերից լիրը... մը-ունչում էր Եղօն:

Կ. Պօլսից առած առմասկի տիրոջ—«Հրանտ»-ին դժաւ և տուեց նրան առմասկը:

Հրանտը կարդայ, նստեցրեց իւր մօտ Եղօնի, երկար խօսեցրեց նրան, գիշերը իւր տունը հիւր տարաւ, մինչև կէս գիշեր էլ ինքը խօսեց և միւս առաւօտ շուտով դէպի գիւղը Ճանապարհ գրեց մտախոհ Եղօնի:

Կէսօր էր, երբ Եղօն գիւղը մտաւ և վազեց դէպի տուն:

Բակը ներս մտնելուն պէս ապշած մնաց:

Տունը բոլորովին դատարկ էր և նրա շեմքի վրայ նստած երեւում էին միայն ծերունի հայրը, որը զըրկեց նրան, լաց եղաւ նրա կուրծքի վրայ, և որդին, որը եկաւ ընկնելու նրա գիրկը և գոչեց՝

— Ո՞ւր է մայրիկը...

— Եյ՞ո, հայր, գոչեց Եղօն, — ուր է մայրս, ուր է կինս, վերջապէս խօսիր, ինչո՞ւ այսպէս թորշոմել և սաստիկ ծերացել ես, ինչո՞ւ օրդիս այսպէս նիշար և կեղտոտ է... խօսի՛ր հայր...

Ծերունին սրբեց դէմքը և ալէխառն մօրուքը, կամցաւ չ'արտասուել սակայն նորից արտասուեց և ասայ:

— Ա՛խ որդի՛, մայրդ մեռաւ քեզ օրհնելով... իսկ կինդ մեռաւ քեզ անիծելով որ թողիր իրեն մէնակ, որ ձգեցիր իրեն գազանի ձանկը, որ գնացել ու մոռացել էր մեզ... կինդ անիծեց քեզ, որովհետեւ նա արատեց իւր պատիւը... չը կարողացաւ քեզ հաւատարիմ մնալ... և դրա պատճառը դու էիր...

Եղօք աչքերը մթնեց, քիչ մնաց ընկնէր, երերաց
և հարցրեց դողդոջուն ձայնով.

— Այդ ի՞նչ ասացիր, հայր...

— Ասացի, ինչ որ եղել է, որդի... լսիր, պատմեմ
քեզ ամեն ինչ: Երբ հինգ ոսկիդ տուինք վաշխ-
առուին, նա արդէն մեր կովը քաշել տարել էր և,
երբ յետ պահանջեցինք, ասաց, որ դեռ հինգ ոսկի
և տաս ոսկու տոկոսն ես պարտ ես իրեն... անցան

Դիմում
ամիսներ. չոր հաց ուտելով | Տերունի մայրդ մեռաւ,
իսկ կինդ գնում զրացիներից կաթ և մածուն էր
խնդրում, որ չը լինի թէ ես էլ մօրդ պէս լինիմ և
ինքը անօգնական մնայ... Բայց մի օր կինդ դուրս
գնաց և գիշերը տուն չ'կաւ: Երկրորդ օրը նրան
տուն քերին ջախջախուած: Գիտես մեր աղքիւրի
մօտի ձորը... նրա գլխից նա իրեն ձորն էր ձգել և
իմ գրկիս մէջ մեռաւ, անիծելով քեզ և պատմելով
թէ ինչպէս վաշխառուն բռնաբարեց իրեն... Կինդ
մի սուրբ կին էր, չուզեց ապրել ակամայ քեզ ան-
հաւատարիմ գտնուելուց յետոյ և իրեն սպանեց:

Եղօն ձեռքերով մազերը բռնեց և գոչեց կատաղի
ձայնով.

— Մինչդեռ ե՛ս, ե՛ս լիրքս, ե՛ս կեղտոտս, ամեն
օր անհաւատարիմ էի գտնվում իմ պաշտելի կնոջս...
և այս տեղ մի վաշխառու, մի զձուծ, ստորաբարշ
կենդանի դայ պղծելու... Աստուած իմ, ինչու այս
բոլոր գժբախառութիւնները միասին ուղարկեցիր...
խենթանամ.. արի՞ւն թափեմ, յետոյ երթամ բանդ
պարկեմ... իսկ հայրս, որդի՞ս...

Եւ վեր թռաւ տեղիցն, արագութեամբ դուրս եկաւ
տնից, յետոյ գիւղեց ու վազէ-վաղ դէպի քաղաք գնաց:

Երեկոյեան հասաւ քաղաք, գտաւ հրանտին, շըն-
շասպառ ներս ընկաւ, ամեն բան նրան պատմեց ու
փռուեց գետին...

Հրանտը ժպտում էր:

— Ես արդէն դրանք զիտէի, ասաց նա, — վե՛ր կայ,
եղօ, եկաւ ժամանակը, որ զու վրէժդ առնես...
Ու վեր կացրեց եղօին ու խօսեց նրան:

Ե.

Մի կիւրակի օր էր. Եղօն եկեղեցի մտաւ, աղօ-
թեց սրտագին, խոստովանուեց, ջերմեռանգութեամբ
հաղորդութիւն տուաւ, պաչեց պաչպէց բոլոր պատ-
կերները, եկեղեցու ամեն մի քարը և զուարթ դէմքով
գնաց եկեղեցուց:

Հագել էր իւր միրթապատ «քէզախիկը»¹⁾, իւր
«արեխները», զիլին մի նոր «քեօլով»²⁾ էր գրել՝ «մազ-
մա»³⁾ յերով փաթաթած, մէջքին փաթաթել էր Կ.
Պօլսից բերած լայն ու մեծ շալը և ձեռքին բռնած
ունէր մի բարակ փայտ:

Սրագութեամբ անցաւ մի քանի փողոց, կանգ
առաւ մի գեղեցիկ շինութեան առաջ և գուռը ծեծեց:

Բայց արեցին: Երբ որ իմացաւ թէ Մարտիրոս
աղան վերեւ «օղան» նստած էր, առանց տրեխները
հանելու վեր գնաց և ուղղակի ներս մտաւ:

Մարտիրոս աղան դեռ ևս զիշերազգեստով (եկե-

1) Կարծ վերաբկու բածկոնածե: 2) Մրածալը թաղեալ գլխարկ:

3) Մետաքսեալ թաշկինակ:

զեցի իսկ չեր գնացել) նստած էր օթոցի վրայ, մի կողմից ներգիլէն» էր քաշում և միւս կողմից իւր կողքին զրուած մի արկղեկից մուրհակներ էր հանում, կարգում էր և գրչով թուեր էր զրում մի թղթի վրայ:

Ուրքի ձայնը լսելով, նա ընդհատեց զբաղմունքը և վեր նայեց: Երբ տեսաւ եղօն, սարսուց, գունաթափուց և հազիւ հազ կարողանալով զսպել իրն՝ ասաց.

—Այ բարով եկա՛ր, հազա՛ր բարով, ձդնաւոր եղօ՛, համեցէք, համեցէք, արի նստիր այստեղ... ի՞նչպէս ես, ողջ ես...

—Աստուած կեանք տայ, աղա՛,—ասաց եղօն նըստելով:

—Ե՛, ե՞րբ ես եկել:

—Երէկ եկայ, աղա՛,—խօսեց եղօն ժպտելով:

—Հա՞ շատ լաւ, շատ ուրախ եմ, որ ինձ չես մոռայել, չը լինի՞ թէ մոտածում ես, որ ինձ պարտք ունիս, ոչ ոչ, թէկ մուրհակդ ետ չեմ տուել, սակայն...

—Հոդ չէ, աղա, ընդհատեց նրան եղօն, —այդ մուրհակը, եթէ պարտք չունիմ, հիմա կարող ես տալ... տուր տեսնենք...

—Հա՞ ուզում ես, այս բոպէիս, աղա՛ս, գոչեց աղան և արկղեկի միջից՝ փնտուելով՝ հանեց մի մուրհակ ու պարզեց եղօն:

Բայց եղօն չ'առաւ մուրհակը, այլ ժպտելով ասաց.

—Լաւ, աղա՛, կարելի՞ է կարդաս... ուզում եմ իմանալ թէ այդ մուրհակի մէջ իմ պարտքս որպան է...

—Ի՞նչպէս, —գոչեց զարմացած և գունաթափ ա-

ղան, —ի՞նչպէս թէ ուրքան է... վեց ոսկի ելի... չե՞ս յիշում:

—Ի՞նչպէս չէ, աղա, —ասաց եղօն՝ միշտ իւր հեղնական ժպիտը դէմքին, —բայց ախր հայրա զրում էր թէ՝ դու ասել ես, որ ես քեզ 10 ոսկի եմ պարտական.. .

—Ե՞ս, Ե՞ս եմ ասել քան լիցի. եղբայր, ինչե՞ր ես ասում... առ, առ մուրհակդ, երեխայական բաներ մի խօսիլ:

—Լաւ, լաւ, աղա, մուրհակը կ'առնեմ, բայց...

Ասաց եղօն և, արագութեամբ սենեակի դռան կողմը յատկելով, դուռը փակեց, յետոյ դառնալով ապշած վաշխառուին, երկու քայլ արեց դէպի նա և ասաց դառն ձայնով.

—Աղա՛, հինգ ոսկին առնելուց յետոյ, կովն էլ քաշեցիր տարար և ծնօղայս յամաք հացով միայն թողիր... այդ բաւական չէր... կնոջս էլ բռնաբարեցիր... .

Վաշխառուն՝ գունաթափ՝ մուրհակները թողեց և տեղիցը վեր թռաւ:

—Ի՞նչ է այդ, —ասաց եղօն, —ուր ես շարժվում տեղից. նստի՛ր և լսիր ինձ... նստի՛ր, աւելացրեց նա և, իւր հուժկու ձեռքով բռնելով նրա ուսիցը, մղեց նրան օթոցի վրայ. —այժմ, կրկնում եմ, կիսս բըռնաբարեցիր և նա ինքն իրեն սպանեց... ազատուեցար էլի՞... խօսք չ'ունիմ... խօստվանվում ես, որ այդ արել ես...

Վաշխառուն նորից ուրքի կանգնեց և շուարած ու բարկացած պատախանեց.

—Ինչե՞ր ես ասում, եղբայր, կիւրակի օր եկել

Ե՞նչ զրապարտութիւններ ես անում... Հիմա ես կ'երթամ միւթէսէրիֆի մօտ...

— Զայնդ... գոչեց Եղօն, «քէզախիկի» տակից դաշոյնի ծայրը ցցց տալով.— Իմէն նորէն բարձր խօսե՛ս, շան սատակ կ'անեմ... նստի՛ր և պատասխանիր... նստի՛ր:

Վաշխառուն՝ դաշոյնը տեսնելով լոեց և դողդողալով նստեց:

— Այժմ,— շարունակեց Եղօն,— ամենքի հետ երեւի այդպէս ես վարվում, փողը տալիս ես մէկ, առնում ես երկու և, այդ բաւական չէ, խլում ես նրա ուտեկիքը և պատիւր... ինչով պակաս ես անում քիւրդերից. ինչով ես զանազանփում Միրզա բէզից, Հաջի Թահիբից, Հասան բէզից... տե՛ս, լսիր ինձ, ես, որ քեզնից անպատճած մի զոհ եմ, եկել եմ քեզնից ազատելու իմ միւս ընկեր լինելիք անձերին... այս րոպէս կըտաս ինձ բոլոր մուրհակները...

— Բայց, թոթովեց աղան:

— Զայնդ... մի խօսք չեմ ուզում,— գոռաց Եղօն և դաշոյնը՝ բոլորովին հանելով՝ փայլեցրեց նրա աչքի առջև, — շնուտ, մուրհակները... բոլորը այս արկղեկի մէջն են, ուրիշ որտեղ կայ...

— Ուրիշ ոչ մի տեղ չըկայ...

— Իսկ այս պահարանի մէջ... գեօշէկիդ տակը... ելե՛ր և շուտով հաւաքիր բոլորը ու լից այս արկղի մէջ... ելե՛ր...

Դաշոյնը սափակեց վաշխառուին կատարել Եղօի բոլոր հրամանները: Մուրհակները բոլորը ժողովուեցին արկղեկի մէջ, որ՝ առնելով Եղօն՝ զրեց վաշխառուի առջև, արագութեամբ հանեց զրպանից մի լուցկի, կրակ տուեց թղթեղին և գոչեց...

— Վայելէ մուրհակներիդ ծուխը...

Վաշխառուն ուզեց գոռալ բայց դաշոյնը մօտեցաւ կոկորդին. նա լոեց և սկսեց արտասուել:

— Տրէշային արցունքներ... ասաց Եղօն դիձաղով:

Երբ այրուեց վերջին մուրհակը և ծուխը քուլաքուլաքուրս գնաց երդիկից՝ Եղօն մօտեցաւ գեռ ևս արտասուող վաշխառուին և՝ բռնելով նրա թեկից՝ ասաց.

— Մուրհակները ոչնչացան, սակայն դրանց գրողը նորէն կարող է զրել զրանց նմանները... ակէտք է ոչնչացնել ոչ թէ դանակը, այլ դանակ բռնող ձեռքը... այդպէս էր ասում Արշաւիրը... զէ՛հ Մարտիրոս աղա, եթէ հաւատում ես մի բանի, եթէ ունես Աստուած և այդ Աստծուն կարող ես դիմել չոքիր և զզջալով խոստովանուիր նրան, թէ քանի մարդ ես ոչնչացրել քանի՛ ազգակիցներիդ արիւնաքամ և անպատիւ ես արել քանիւններին պատճառ ես եղել պանդխտութեան մէջ կամ մեռնել կամ հրէշանալ... չոքիր և աղօթիր, եթէ կարող ես, որովհետեւ էլ կեսնեղ վերջանում է... զւերը ուղում են իրենց ընկերին իրենց մօտ...

Վաշխառուն քարացել էր համարեա, մեքենայաբար չոքեց ու մեքենայաբար ասաց «Հայր-մեր»-ը և երբ տեսաւ, որ դաշոյնը կոկորդին է մօտենում, ձեռքերը պարզեց և գոչեց...

— Խղճա՛...

— Որի՞ն խղճացիր:

— Որդիներ ունիմ:

— Քանի՛ որդի որբ թողիր:

— կին ունիմ... սի առ բազմաթիվ գուն Այցել...
— Քանի՞ կին անպատճեցիր: Առ մարտնչութեւ
Եւ բանեց Եղն կատաղութեամբ վաշխառուին
կոկորդից, սեղմեց յետոյ զգուշութեամբ հեռու կա-
ցաւ, որ չարիւնոտուի, և կեռ դաշոյնը այնպէս կա-
տաղութեամբ միեց նրա կուրծքի մէջ, այնպէս հուպ
տուեց կոկորդը... որ ժայթքեց արիւնը դէպի ցած
և մի խռոսով միայն վերջացաւ ամեն ինչ...
Սյդ անելուց յետոյ, Եղն թեսով ձակատի քըր-
տինքը սրբեց, կրաննալով ստուգեց, որ վաշխառուն
գիտի է գողձել և հանդարտութեամբ դուրս դնաց
նախ սենեակից, որի դուռը փակեց, և ապա բակից...
Փողոցում՝ նրան սպասում էր մի երիտասարդ,
որը հարցըց.

— Եղաւ: բայց մանամ ըստ և ճանամ սամ
— Սյմ, — ասաց Եղն: խոսնակ խոսնոր և զից
— Ենորհակալ եմ. ինձ հետ պարտաւոր են քեզ
շատ հայեր... գնանք...
Փոքր ինչ քայլեցին:
— Սյժմ... ասաց երիտասարդը կանգ առնելով, —
հօրդ և որդուդ կը նայուի... կառավարութիւնը պի-
տի փնտուէ քեզ այնպիսի ժրածանութեամբ, ինչ
անհոգութեամբ որ չէ տեսնում քիւրզերի արած-
ները... Քաղաքից գուրս գնա, Սեպ քարի տակ կը
գտնես մի ձիաւոր, կը տաս նրան այս թուղթը...
կը հեծնիս ձին և, այդ հեռուի լեռները տեսնում ես...
— Սամնոյ լեռները:

— Սյօ... կը գնաս այն կողմը... կը հարցնես ան-
կախն հայ աւազակ Յովհաննէս քէհեային և կըտաս
նրան այս միւս թուղթը... քէհեան 500 ձիաւոր ունի,

501-երորդն էլ գու եղիր... գնա՛, Աստուած քեզ
հետո... երբ պէտք լինի, թէ ինձ և թէ որդուդ կը
տեսնես... ապահով գնա...

Գրկեց, Համբուրեց նրան և տուեց թղթերը...

Եղն արագութեամբ հեռացաւ և քաղաքից դուրս՝
կէս ժամ հեռաւորութեամբ՝ գտնուող Սեպ քարի
մօտ գնաց, ուր տեսաւ մի ձիաւոր: Մօտեցաւ, բա-
րեւեց և տուեց նրան թղթերից մէկը... Ձիաւորը
կարդաց, իջաւ ձիուց, տուեց նրան իւր ձեռքի հը-
րացանը, համբուրեց նրան և ասաց.

— Տէր ընդ քեզ...

Եղն աշտանակեց, ձիու գլուխը սուլիք կարապետի
կողմը գարձրեց, գլուխը բանալով աղօթեց, աչքերից
երկու կաթիլ արցունք էլ իւր հայրենիքի հողի
վրայ կաթեցրեց, խաչակնքեց և

— Եա Մշու Սուլիք կարապետ, գոչեց:

Եւ՝ մարակելով ձիուն՝ անհետացաւ բլուրների մէջ:
Սրեւ, որ մինչեւ այդ ժամանակ ծածկուած էր
ամպերի տակ, գուրս ելաւ և Մշոյ գաշտը լուսա-
ւորեց իւր պայծառ ճառագայթներով...



թեզ ծառանու ամր սպայր ուր թէ պղղող-105
թէ քայլու թէ և չոչ թէ գիշ զոյլու զոյլ սպայր
սպայր ինչ այս անձնութիւններուն
սպայր թէ զոյլ և ամր զոյլութիւն զոյլ
այս այս զոյլունց և ամրունց զոյլունց ուրուն
կորու թէ զոյլ ուրուն զոյլունց ուրուն ամր
ամր ուրուն զոյլունց ուրուն ամր ուրուն զոյլ
զոյլունց սպայր սպայր թէ զոյլ ուրուն զոյլ
զոյլունց սպայր սպայր զոյլ ուրուն զոյլ
զոյլ ուրուն զոյլունց ուրուն

թէ զոյլ թէ զոյլ-

կորունց զոյլ զոյլունց ուրուն զոյլ
զոյլունց ուրուն զոյլունց զոյլունց ուրուն
կորունց զոյլ թէ զոյլունց զոյլունց ուրուն
ամր զոյլունց ուրուն զոյլունց ուրուն
զոյլունց ուրուն զոյլունց ուրուն ամր
ամր զոյլունց ուրուն զոյլունց ուրուն ամր
ամր զոյլունց ուրուն զոյլունց ուրուն ամր
ամր զոյլունց ուրուն զոյլունց ուրուն ամր

18948

2013

